

ՀՏԴ 036: 037:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
Ադամյան Ն. Վ.**

Աշխատանքում հիմնավորվում է մասնագիտական կրթական բարեփոխված ծրագրերով ուսուցման միջոցով ապագա մանկավարժներին դպրոցում ներառական կրթություն կազմակերպելու, գիտելիքներով ու հմտություններով ապահովելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. համընդհանուր ներառական կրթություն, մասնագիտական ծրագրերի բարեփոխում, ներառական կրթություն թեմայի ծրագիր, ուսուցման մեթոդիկա:

*Այդ «դժբախտ փոքրիկներին» օգնելու համար ավելի շատ առանձնահատուկ ուսուցում է հարկավոր, քան բուժում:
Մարիա Մոնտեսսորի [3]*

Ներառական կրթությունը կրթության առանձին տեսակ չէ: Դա կրթության **հատկանիշ է**, որը ենթադրում է յուրաքանչյուր երեխայի կարիքին համապատասխան կրթության իրականացում: Ներառական կրթությունը **ծրագիր է**, որի իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա, ինչը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք յուրաքանչյուրի հանդեպ:

Սալամանկայի համաժողովի մասնակից Բ. Լինդերվիստի զեկույցում նշված է. «Աշխարհի բոլոր երեխաներն ու պատանիները՝ իրենց ուժեղ և թույլ կողմերով, իրենց հույսերով ու ակնկալիքներով ունեն կրթության իրավունք, և ոչ թե մեր կրթական համակարգերն ունեն իրավունք որոշակի տեսակի երեխաների նկատմամբ: Հետևաբար, հենց երկրի դպրոցական համակարգն է, որ պետք է հարմարեցվի բոլոր երեխաների կարիքները բավարարելուն» [4]:

2014 թ.-ի դեկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի ընդունումով Հայաստանի Հանրապետությունն ամրագրեց համընդհանուր ներառական կրթության անցման քաղաքականությունը՝ համընդհանուր ներառական կրթությունը հռչակելով որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Այդ քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է [1; 2, 4]: Համընդհանուր ներառականության գլխավոր առաքելությունը մեկն է՝ ստեղծել այնպիսի պայմաններ և միջավայր, որ **որևէ երեխա կրթությունից դուրս չմնա:** Խոսքը վերաբերում է ինչպես ֆիզիկական տարբեր կարիքներ ունեցողներին, այնպես էլ առանձնահատուկ օժտվածներին:

Ներառական կրթության կազմակերպման էությունը ներառում է երկու փոխկապակցված բաղադրիչներ՝

1) ներառական կրթության մանկավարժահոգեբանական մեթոդների, կրթության բովանդակության և գնահատման սկզբունքների ու մոտեցումների մշակում,

2) միջավայրի հատուկ պայմանների ստեղծում և համագործակցված աշխատանքի իրականացում:

Համագործակցությունը ենթադրում է ոչ միայն պետական քաղաքականության պահանջների իրացումը բուն կրթություն կազմակերպող կառույցների կողմից, այլև բազմաձևություն՝ հասարակություն – համայնք – ընտանիք – դպրոց – դասարան շրջանակում: Եթե պետության դերը ընդունված քաղաքականության իրացման ճանապարհին անհրաժեշտ կառույցների, նորմատիվային փաստաթղթերի, ֆինանսատնտեսական գործունեության զարգացման, մեթոդական ուղեցույցների ստեղծումն է, գործընթացի մասնակիցներին տարբեր բնույթի շարունակական աջակցությունների, վերապատրաստումների կազմակերպումն ու այլ գործընթացների իրականացումը, ապա ներառական կրթության կազմակերպման մասնակիցներից յուրաքանչյուրի դերը կարող է լինել ակտիվ մասնակցությամբ, փորձով, անհատական նախաձեռնությամբ անհրաժեշտ կառույցների զարգացմանը, կատարելագործմանը, ուսուցման կազմակերպման մոտեցումների հարստացմանը նպաստելը, ինչը, ի վերջո, որակյալ կրթության տեսքով կդառնա հասարակության հարստությունը:

Կրթական այս գործընթացը հեշտությամբ չի իրագործվի միայն օրենքի ընդունումով ու կրթության բովանդակության և էության սահմանումով: Անհրաժեշտ է լուծել առկա բազմաթիվ մարտահրավերներ: Դրանցից են՝

- ներառական կրթության էության մասին հասարակության տարբեր խմբերում իրազեկվածության բարձր մակարդակի ապահովման,
- մասնագիտական-բուհական կրթական ծրագրերի վերանայման և կրթական քաղաքականության հետ դրանց համապատասխանեցման,
- հանրակրթության կազմակերպման տարբեր մասնակիցների (դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների, աջակցության խմբի մասնագետների, ծնողների) համար մասնագիտական մեթոդական ուղեցույցների, օժանդակ գրականության ստեղծման,
- բոլոր մասնակիցների համար վերապատրաստումների կազմակերպման,
- փորձի փոխանակման հարթակների ստեղծման անհրաժեշտությունները և այլն:

Յուրաքանչյուրի՝ իր գործունեության ու հասարակության մեջ ունեցած դերի շրջանակում սրտացավ ու ակտիվ մասնակցային ներդրման պարագայում մատնանշված և այլ խնդիրների հաղթահարմամբ էլ ակնկալելի կլինեն գործընթացի հաջողությունները:

Հանրակրթության արդյունավետ կազմակերպելուն խանգարող առավել ազդեցիկ գործոններից մեկը իրազեկվածության պակասն է՝ ներառական կրթության իմաստի սխալ ընկալումը հասարակության տարբեր շերտերի կողմից: Թյուրիմացաբար շատերի համար ներառված են համարվում միայն որևէ ֆիզիկական կամ մտավոր խնդիր ունեցող աշակերտները (հետագա ասելիքը ավելի հասկանալի դարձնելու համար նշենք, որ դպրոցում ամենահաճախ հանդիպող կարիքներն են՝ երեխաների մտավոր թերզարգացածությունը, տեսողական, լսողական, հենաշարժողական համակարգի, վարքագծային-հոգեբանական թեթև, միջին, ծանր և խորը աստիճանի խանգարումները): Այդպիսի ընկալումով են պայմանավորված առողջ երեխաներ ունեցող ծնողների ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառաբանություններով ընդվզումները դասարանում որևէ խնդրով երեխայի առկայության հետ (այդպիսի երեխաները հոգեբանական սթրեսի պատճառ են սովորական երեխաների համար, իլում են նրանց ուսուցման համար հատկացված ժամանակը, մի քանիսը նաև վտանգավոր են և այլ

մեկնաբանություններով): Ներառական կրթական միջավայրի ընկալումը սխալ է նաև խնդիր ունեցող երեխաներից շատերի ծնողների (հատկապես գյուղական վայրերում՝ ավանդական կարծրատիպային մտածողության, սոցիալական ու միջավայրային, ֆիզիկական աննպաստ պայմանների և այլ գործոններով պայմանավորված), մասնագիտական և հոգեբանամանկավարժական տեսանկյունից միևնույն դասարանում բազմազան կարիքներով աշակերտների հետ աշխատելու անպատրաստ ուսուցիչների, կրթության կազմակերպիչների, հասարակության տարբեր ներկայացուցիչների և այլոց համար:

Մեր կողմից, որպես ԿԱԻ-ի Շիրակի մասնաճյուղի կենսաբանության գլխավոր մասնագետի, ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու առանձնահատկությունների հետ կենսաբանություն և բնագիտություն դասավանդող ուսուցիչների իրազեկվածության բարձրացման և նախնական հմտությունների ձևավորման նպատակով առաջին փորձերն արվել են վերջին տարիներին կազմակերպած վերապատրաստման դասընթացների ժամանակ, երբ դեռ մարզում գործում էին ներառական կրթություն կազմակերպելու իրավունք ունեցող ընդամենը մի քանի դպրոցներ և իրազեկվածության աստիճանը ցածր էր (մարզը համընդհանուր ներառման է անցել 2019 թ. սեպտեմբերից): Կարևոր արդյունքը ներառական կրթության նկատմամբ մարզի ուսուցիչների վերաբերմունքի ու պատկերացումների զգալի չափով դրական փոփոխությունն էր, շատերի կողմից այդպիսի կրթության կազմակերպման կարևորության ու անխուսափելիության ընկալումը, ինչը խթան է հետագա արդյունավետ գործունեության համար: Իհարկե, հետադարձ կապի, հաշվետվության մեխանիզմների, ինչպես նաև մեթոդական ձեռնարկների ու մասնագիտական ուղեցույցների գրեթե բացակայությունը չէին կարող ապահովել վերապատրաստումների միջոցով համընդհանուր ներառականության գաղափարախոսության լիարժեք արդյունավետ ներդրում և որակյալ կրթության կազմակերպում: Իրականում ոչ միայն որակյալ կրթություն ապահովելու, այլև հոգեկան բավարարվածություն ունենալու համար ուսուցիչն իր ամենօրյա գործունեության մեջ բազմաբնույթ մեթոդական գրականության, արդեն եղածներից ճիշտ օգտվելու, դրանցում ներկայացվող առաջարկները ճիշտ կիրառելու համար ուղղորդող խորհրդատվությունների, սեմինարների, վերապատրաստումների, դպրոցներում երկարաժամկետ անմիջական աջակցությունների,

հաջողված փորձերին իրազեկ լինելու և այլ կարիքներ ունի: Միանշանակ է, որ մատնանշված բոլոր գործընթացներն էլ իրականացվում են իրավասու տարբեր կազմակերպությունների կողմից: Մակայն, հաշվի առնելով շահառուների (դպրոցների, ուսուցիչների) մեծաթիվությունն ու ընդգրկման լայն աշխարհագրությունը, ակնհայտ է, որ ներկայումս իրականացվող միջոցառումները բավարար չեն կարճ ժամանակում (մինչև 2022 թվականը համընդհանուր ներառման անցումը հանրապետությունում պետք է ավարտված լինի) կրթության կազմակերպման և որակի պահանջվող արդյունավետությունն ապահովելու համար:

Եթե մանկավարժը տիրապետի սովորողների հատուկ կարիքներին համապատասխան մասնագիտական գործիքների ու հոգեբանամանկավարժական մոտեցումների, ապա խուսափող, դիմադրող դերակատարից կփոխվի ԿԱՊԿՈՒ երեխաների համար փոփոխություններ նախաձեռնողի ու իրականացնողի [4]:

Ուստի, կարծում ենք, որ հանրակրթությանն անհրաժեշտ գրագիտությամբ ու նախնական հմտություններով օժտված մասնագետներով ապահովելու ամենաարդյունավետ ու արագ արձագանքման ճանապարհը մանկավարժական բուհերում համապատասխան մասնագիտական դասընթացներում «Ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները» թեմայի ներդրումն ու ուսումնասիրումն է, որում համոզված ենք դարձյալ մեր փորձով՝ որպես մանկավարժական կադրերի պատրաստման գործի անմիջական մասնակից:

Որպես վերևում արված առաջարկությունը կյանքի կոչելու հնարավոր ճանապարհ՝ ներկայացնում եմ ՇՊՀ-ի «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» դասընթացի ծրագրում սեփական նախաձեռնությամբ ներառված «Ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները» թեմայի տեսական ու գործնական ժամերով ուսուցման կազմակերպման մեր հիմնական մոտեցումները՝ չսահմանափակելով խնդիրը լուծելու յուրաքանչյուր մասնագետի ստեղծագործական շրջանակները:

Ծրագրում թեմայի ուսուցման նպատակներ են՝

- տեսական նյութի մատուցմամբ **ապահովել** ուսանողների (ապագա կենսաբանության, բնագիտության և քիմիայի ուսուցիչների) իրազեկվածությունը համընդհանուր ներառականության գաղափարախոսության և պահանջների վերաբերյալ, **ծանոթացնել**

խնդրի շրջանակներում կատարված հայրենական և արտասահմանյան մեզ հասանելի մանկավարժական ու մեթոդական աշխատանքներին,

- տեսական գիտելիքներ **հաղորդել** սովորողներին տարբեր կարիքներ ունեցող երեխաների ֆիզիկական կամ հոգևոր խանգարումների առաջացման հնարավոր պատճառների (ոչ հատուկ մանկավարժական կրթության համար պահանջվող խորությամբ), դրսևորումների, երեխայի զարգացման ու տարիքային առանձնահատկությունների, ինչպես նաև տարբեր խանգարումներ ու կարիքներ ունեցող աշակերտների ուսուցման առանձնահատուկ պահանջների վերաբերյալ:

Գործնականորեն **ձևավորել ու զարգացնել ուսանողների՝**

- տարբեր կարիքներով երեխաների ուսուցման առանձնահատուկ մոտեցումներ մշակելու, դրանք անընդհատ ձևափոխելու, հարստացնելու, սինթեզելու,
- համակուրսեցիների ներկայացրած մոտեցումները քննարկելու, վերլուծելու, հիմնավոր առաջարկություններ անելու,
- տարբեր կարիքներով երեխաների համար հարմարեցված չափորոշչային պահանջներ, թեմատիկ ու օրվա դասի պլաններ ստեղծելու,
- հարմարեցված պլաններով դասեր կազմակերպելու **հմտություններ:**

Գործնական դասերի մեր կողմից ստեղծված մեթոդիկայի համաձայն՝

- լսարանում ստեղծվում են (վերևում արդեն նշված) ամենահաճախ հանդիպող տարբեր կարիքներով պայմանական կերպարների բնութագրեր՝ կրթության առանձնահատուկ կարիքների, առկա գիտելիքների ու կարողությունների նկարագրով, որոնք էլ ուղեցույց են դառնում կուրսի բոլոր ուսանողների հետագա անհատական աշխատանքների իրականացման համար: Խորհուրդ է տրվում նաև ներկայացնել ընտանիքի պայմանական վերաբերմունքը իրենց երեխայի կարիքի ու կրթության նկատմամբ:
- Լսարանի համաձայնությամբ ընտրվում է երեխայի պայմանական դասարանում ուսումնասիրվող կենսաբանության (կամ այլ առարկայի) ուսուցման մեկ դաս կամ թեմա: Հանձնարարվում է անհատական կամ համագործակցային աշխատանք (կախված ուսանողների թվից, գործնական դասերի համար հատկացված ժամաքանակից կամ այլ հանգամանքներից) տվյալ թեմայի ուսուցման

վերաբերյալ մեկ կամ երկու կերպարին հարմարեցված ուսումնական, մանկավարժահոգեբանական մոտեցումներ մշակելու վերաբերյալ՝ յուրաքանչյուր գործնական դասին քննարկելու համար (որոշ չափով նման է ուսուցիչներին արդեն ծանոթ ուսուցանող գնահատման պահանջներին): Այս տարբերակի կարևոր առավելությունը միննույն խնդրի վերաբերյալ բազմակարծության և արդյունավետ լուծում գտնելու հնարավորությունն է: Դասաժամերի սղության դեպքում նույն դասի ժամանակ կարող են ներկայացվել առանձին կերպարների համար ստեղծված հարմարեցումները տարբեր խմբերի կամ անհատների կողմից:

- Գործնական դասերին առաջարկների ներկայացման, քննարկման, վերլուծման ու խմբագրման արդյունքում ստեղծվում են համընդհանուր մանկավարժահոգեբանական և մեթոդական ուղեցուցային նախնական պաշարներ:
- Ստեղծված մոտեցումների կիրառումով ուսանողների կողմից մշակվում են դասի պլանների անհատական առաջարկներ՝ տարբեր կարիքներով երեխաների համար հարմարեցված քայլերի ու դասի կազմակերպման համար անհրաժեշտ բաշխիչ նյութերի, առաջադրանքների վերաբերյալ: Պլանները քննարկվում են լսարանում, խմբագրման արդյունքում ձևակերպվում է դասի վերջնական օրինակելի պլան և հանձնարարվում նախապատրաստվել դասի կազմակերպմանը:
- Համագործակցության սկզբունքով լսարանում փորձնական դաս է կազմակերպվում: Կատարվում է քննարկում, ներկայացվում են դասի կազմակերպման բարեփոխման առաջարկներ, որոնց հիման վրա յուրաքանչյուր ուսանող լրամշակում է իր անհատական վերջնական աշխատանքը: Այդ աշխատանքները լրացնում են նաև հաջորդ տարիներին թեմայի ուսումնասիրության պաշարները:
- Հնարավորության դեպքում (օրինակ, եթե դասընթացի ուսումնասիրումը համընկնում է պրակտիկայի ժամանակահատվածին, կամ պրակտիկա անցկացվող դասարանում առկա են նմանատիպ կարիքներով երեխաներ) դասերը կամ դրանց առանձին մոտեցումները փորձարկվում են նաև մանկավարժական պրակտիկա անցկացվող դպրոցներում:
- Հաջողված փորձերը ներկայացվում են նաև տարբեր հարթակներում՝ ուսանողական գիտական, թեմատիկ համաժողովներ, տարբեր թիրախների համար կազմակերպված սեմինարներ, բաց դասեր և

այլն, որոնք ևս նպաստում են մասնագիտական-մեթոդական մոտեցումների պաշարների հարստացմանը:

Ի հավելումն ասվածի՝ այս ուսումնական տարում իրականացնում ենք նաև նշված թեմայի շրջանակում բակալավրի ավարտական հետազոտական աշխատանք: Հետազոտությունը կհարստացնի հետազոտողներին մեր կողմից թեմայի ուսուցման ծրագրային նյութը, կծառայի նմուշ-օրինակ մարզի ուսուցիչներին, դասավանդող դասախոսներին և այլ շահագրգիռ անձանց վերապատրաստումների, սեմինար-խորհրդատվությունների ժամանակ՝ արդեն ունեցած փորձի վրա հիմնված գործնական աջակցություն տրամադրելու համար:

Որպես աշխատանքների հետազոտական զարգացման ճանապարհ՝ նախատեսել ենք նաև՝

- Բուհում պարբերաբար կազմակերպել կլոր սեղաններ, ուսանողական ընթերցումներ կամ այլ ձևի քննարկումներ՝ մեր կողմից մատնանշված թեման ուսումնասիրող տարբեր ֆակուլտետների ուսանողների և մասնագետների մասնակցությամբ:
- Համագործակցել ներառական ոչ ֆորմալ կրթություն կազմակերպելու փորձ ունեցող տարբեր հասարակական կառույցների և հանրակրթական դպրոցների մասնագետների, ծնողների հետ և մեր կողմից ստեղծված մոտեցումները փորձարկել նրանց շահառուների ուսուցման կազմակերպման գործընթացում, ինչպես նաև, օգտվելով նրանց փորձից, հարստացնել մեր գիտելիքներն ու հմտությունները:
- Չարգացնել ուսանողների շրջանում հասարակական կառույցների շահառուների, պրակտիկա անցկացրած դպրոցների ներառված կամ որևէ այլ ձևով ընտրված աշակերտների մենթորներ դառնալու կամավորության գործունեությունը:
- Իրականացնել կուրսային, դիպլոմային և մագիստրոսական հետազոտական աշխատանքներ՝ հարստացնելով ներառական կրթության կազմակերպման մանկավարժամեթոդական մոտեցումների պաշարները:

Լիահույս ենք, որ առաջարկվող մոտեցումները կիրառելի կլինեն մանկավարժական բուհերում ուսումնասիրվող հանրակրթական բոլոր մասնագիտությունների դասավանդման մեթոդիկաների կամ «Մանկավարժություն» դասընթացի ծրագրերի բարեփոխման համար: Իսկ հանրակրթության ժամանակակից պահանջներին համապատասխան կրթված շրջանավարտներ ունենալը կարճ

Ժամանակում կլուծի դպրոցները մեծաթիվ իրազեկ մասնագետներով համալրելու անհրաժեշտության հարցը:

РОЛЬ ВУЗОВСКОГО ОБРАЗОВАНИЯ В ОРГАНИЗАЦИИ ИНКЛЮЗИВНОГО ОБУЧЕНИЯ В ШКОЛАХ

Адамян Н. В.

В статье обоснована необходимость обеспечения будущих специалистов нужными знаниями и навыками с целью организации инклюзивного обучения в школах путем внедрения в образовательный процесс преобразованных вузовских программ.

Ключевые слова: всеобщее инклюзивное образование, преобразованная вузовская программа, тематическое программирование инклюзивного обучения, методы преподавания.

THE ROLE OF PROFESSIONAL EDUCATION FOR THE ORGANIZATION OF THE INCLUSIVE TEACHING IN SCHOOLS

Adamyan N. V.

In the article we present the need of professional education for future teaching specialists, aiming at providing with the necessary knowledge and skills for the organization of the inclusive teaching in schools. We propose to utilize improved university programmes for the specialized education of the teachers.

Keywords: universal inclusive education, reforms of university program, thematic programs of inclusive education, methods of teaching.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թադևոսյան Ս. Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկ: Երևան: Հեղինակային հրատարակություն: 2017: 136 էջ:
2. Թադևոսյան Ս. Ներառական կրթություն: Ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ: Երևան: «Հուլիսի կամուրջ» ՀԿ: «Հոսթ» ՍՊԸ հրատ.: 2018: 145 էջ:
3. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներոդ դարի մանկավարժական տեսություններ: Ձեռնարկ

մանկավարժների և ուսանողների համար: Վարդույան Ս. Տ
(պատասխանատու խմբագիր), Վարել Գ. (ակադեմիական
խորհրդատու): Երևան: «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»: 2005: 410 էջ:

4. Եղիազարյան Ս. Ներառական կրթության կազմակերպում:
Զեռնարկ: Գյումրի: «Դպիր»: 2019: 112 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Ադամյան Ն. Վ.- կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ՝ nelliadamyam60@gmail.com

Տրվել է խմբագրություն 22.04.2020